# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 249-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ, 30-րդ, 31-րդ կետերի և 32-րդ կետի «ա» ենթակետերով և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» և Վայք համայնքի բնակիչ Ռուբեն Հայրիկի Պողոսյանի դիմումը (մուտք՝ 2023 թվականի դեկտեմբերի 11-ի N Պ-10)՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի Վայք քաղաքի Ս.Շահումյան փ. 93 հասցեում գտնվող քաղ. Ռուբեն Հայրիկի Պողոսյանի սեփականությունը հանդիսացող հողամասի վրա իր իսկ կողմից կառուցված 90.20 քմ մակերեսով առևտրի սրահը, որի զբաղեցրած և սպասարկման համար առանձնացված հողամասի մակերեսը կազմում է 0,02984 հա, համարել օրինական (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023RNVBS2):
2. Ընդունել ի գիտություն, որ կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում այլ քաղաքացիների կյանքին ու առողջությանը: Ինքնակամ կառույցը քանդման ենթակա չէ, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտեին՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու նպատակով:
4. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված 90.20 քմ մակերեսով կառույցը, սահմանված չափով և կարգով առաջարկ կատարել կառույցն իրականացրած անձ Ռուբեն Հայրիկի Պողոսյանին շինության համար վճարել 256 530/ 90.20 x 2844/ ՀՀ դրամ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 250-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 28.11.2023 ԹՎԱԿԱՆԻ N 229-Ա ԵՎ 30.11.2023 ԹՎԱԿԱՆԻ N 242-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՉԵՂՅԱԼ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Չեղյալ համարել Վայք համայնքի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 28-ի «Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Զառիթափ բնակավայրում գտնվող բնակավայրերերի նպատակային նշանակության 0,01751 հա մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը որպես առանձին միավոր ճանաչելու, համայնքային սեփականություն գրանցելու և հասցեավորելու մասին» թիվ 229-Ա որոշումը:

2.Չեղյալ համարել Վայք համայնքի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 30-ի «Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Վայք քաղաքում գտնվող բնակավայրերերի նպատակային նշանակության 0,00197 հա մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը որպես առանձին միավոր ճանաչելու, համայնքային սեփականություն գրանցելու և հասցեավորելու մասին» թիվ 242-Ա որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 251-Ա

**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,00197 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Վայք քաղաքում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 0,00197 հա բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 10-003-0004-0000 կադաստրային ծածկագրով հողամասը, որի վրա առկա է ինքնակամ կառուցված 37.0 քմ մակերեսով ավտոտնակ, համարել օրինական, ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և հասցեավորել՝ Վայք համայնք, Վայք քաղաք, Ջերմուկի խճուղի, 22/21 ավտոտնակ և ներկայացնել իրավունքի պետական գրանցման (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023F3BNCQ):
2. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
3. Ֆինանսական բաժնին՝ կատարել համապատասխան վճարումներ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 252-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԶԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,01751 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 33-րդ կետով, 18/05/2006թ. թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Զառիթափ բնակավայրում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 0,01751 հա հասարակական կառուցապատման գործառնական նշանակության, 10-022-0002-0000 կադաստրային ծածկագրով հողամասը, որի վրա առկա է Արտուշ Խաժակի Դավթյանի կողմից կառուցված ինքնակամ կառուցված 43.80 քմ մակերեսով շինություն, համարել օրինական, ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և հասցեավորել՝ Վայք համայնք, գյուղ Զառիթափ, 1-ին փողոց 40/1 գազալցակայան և ներկայացնել իրավունքի պետական գրանցման:
2. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
3. Ֆինանսական բաժնին՝ կատարել համապատասխան վճարումներ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 253-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,01103 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Վայք քաղաքում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 0,01103 հա բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 10-003-0004-0000 կադաստրային ծածկագրով հողամասը, որի վրա առկա է ինքնակամ կառուցված 128.9 քմ մակերեսով բնակելի տուն, համարել օրինական, ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և հասցեավորել՝ Վայք համայնք, Վայք քաղաք, Ջերմուկի խճուղի, 12/2 բնակելի տուն և ներկայացնել իրավունքի պետական գրանցման (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023GTJ3UK):
2. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
3. Ֆինանսական բաժնին՝ կատարել համապատասխան վճարումներ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 254-Ա

### ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏԻՐՈՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՐԴԱՆ ՄԻՔԱՅԵԼԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԱՅԴ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Իրավունքը հաստատած փաստաթղթեր չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 2008 թվականի հունիսի 10-ի ՀՕ-117 օրենքով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով և հիմք ընդունելով սեփականատիրոջ դիմումը (N- Բ-15).

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի Մարտիրոս բնակավայրի վարչական տարածքում գտնվող նախկին բաղնիքի շենքը հասցեավորել Վայք համայնք, գյուղ Մարտիրոս, 5-րդ փողոց, 16 շենք:
2. Ճանաչել Վայք համայնքի Մարտիրոս բնակավայրի բնակիչ Վարդան Միքայելի Վարդանյանի /ծնվ. 18.09.1967թ/ Վայք համայնք, գյուղ Մարտիրոս, 5-րդ փողոց, 16 շենք հասցեում գտնվող 0.07562 հա մակերեսով հողամասի և շինության սեփականության իրավունքը:
3. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և չի առաջացնում սերվիտուտ:
4. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 255-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N 245-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1.Չեղյալ համարել Վայք համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 4-ի «Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Վայք քաղաքում գտնվող բնակավայրերերի նպատակային նշանակության 0,02664 հա մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը որպես առանձին միավոր ճանաչելու, համայնքային սեփականություն գրանցելու և հասցեավորելու մասին» թիվ 245-Ա որոշումը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 256-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,02664 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Վայք քաղաքում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 0,02664 հա բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 10-003-0002-0000 կադաստրային ծածկագրով հողամասը, որի վրա առկա է ինքնակամ կառուցված 273.9 քմ մակերեսով շինություն, համարել օրինական, ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և հասցեավորել՝ Վայք համայնք,Վայք քաղաք, Սիամանթոյի փողոց, 17/1 բնակելի տուն և ներկայացնել իրավունքի պետական գրանցման:
2. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
3. Ֆինանսական բաժնին՝ կատարել համապատասխան վճարումներ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vaykṭown@mail.ru

*12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 257-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,3 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՀԿ-Ի ՇԵՆՔԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով.

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի Վայք քաղաքում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 0,3 հա հասարակական կառուցապատման գործառնական նշանակության, 10-003-0004-0307 կադաստրային ծածկագրով շինությունը, հասցեավորել՝ Վայք համայնք, Վայք քաղաք, Ջերմուկի խճուղի, 12/2 շենք:
2. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 258-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏԵԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,06 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՀԿ-Ի ՇԵՆՔԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի Ազատեկ բնակավայրում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 0,06 հա հասարակական կառուցապատման գործառնական նշանակության, 10-005-0005-0014 կադաստրային ծածկագրով շինությունը, հասցեավորել՝ Վայք համայնք, գյուղ Ազատեկ, 1-ին փողոց, 8 վարչական շենք:
2. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 259-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,04 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՀԿ-Ի ՇԵՆՔԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի Զառիթափ բնակավայրում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 0,04 հա հասարակական կառուցապատման գործառնական նշանակության, 10-022-0040-0029 կադաստրային ծածկագրով շինությունը, հասցեավորել՝ Վայք համայնք, գյուղ Զառիթափ, 3-րդ փողոց, 5 վարչական շենք:
2. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 260-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 15.11.2023Թ-Ի ԹԻՎ 215-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ն մասի 1-ին կետով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝

1.Վայք համայնքի ղեկավարի 15.11.2023 թվականի թիվ 215-Ա որոշման հղման մեջ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. մարտի 19-ի թիվ 956-Ն որոշմամբ» բառերի փոխարեն գրել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ» բառերը, այնուհետև ինչպես տեքստում:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 261-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ՅՈՒՐԻԿ ԳՐԻՇԱՅԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ, 30-րդ, 31-րդ կետերի և 32-րդ կետի «ա» ենթակետերով և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» և Վայք համայնքի բնակիչ Յուրիկ Գրիշայի Ալեսանյանի դիմումը (մուտք՝ 2023 թվականի դեկտեմբերի 13-ի N Ա-116)՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի Վայք քաղաքում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության (գործառնական նշանակյությունը՝ բնակելի կառուցապատման) 0,00360 հա, 10-003-0004-0259 կադաստրային ծածկագրով տարածքը հասցեավորել՝ Վայք համայնք,Վայք քաղաք, Ջերմուկի խճուղի, 14/27 ավտոտնակ:
2. Վայք համայնքի Վայք քաղաքի, Ջերմուկի խճուղի, 14/27 հասցեում գտնվող քաղ. Յուրիկ Գրիշայի Ալեսանյանի սեփականությունը հանդիսացող հողամասի վրա իր իսկ կողմից կառուցված 64.8 քմ մակերեսով ավտոտնակը, որի զբաղեցրած և սպասարկման համար առանձնացված հողամասի մակերեսը կազմում է 0,00360 հա, համարել օրինական (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023MTMG6C):
3. Ընդունել ի գիտություն, որ կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում այլ քաղաքացիների կյանքին ու առողջությանը: Ինքնակամ կառույցը քանդման ենթակա չէ, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտեին՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու նպատակով:
5. Սույն որոշման 2-րդ կետում նշված օրինականացված 64.8 քմ մակերեսով ավտոտնակը, սահմանված չափով և կարգով առաջարկ կատարել կառույցն իրականացրած անձ Յուրիկ Գրիշայի Ալեսանյանին շինության համար վճարել 92 146/ 64.8 x 1422/ ՀՀ դրամ:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 262-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ «ՀԱՋԻ ԴՈՒԶ» ԿՈՉՎՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԵՎ ԳՈՄՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱԽՏԱ ԿՈՉՎՈՂ ՏԱՐԱԾՔ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՃԱՄՓԵԶՐԻՆ ԳՏՆՎՈՂ ԳԻՀԻ ՏԵՍԱԿԻ ԾԱՌԵՐԻՑ ՃՅՈՒՂԵՐ ՀԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ՝

1. Թույլատրել Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի «Հաջի դուզ» կոչվող տարածքում գտնվող և Գոմք բնակավայրի Ախտա կոչվող տարածք տանող ճանապարհի ճամփեզրին գտնվող «Գիհի» տեսակի ծառերից յուրաքանչյուրից կտրել 1-2 ճյուղ՝ (ընդհանուր 50-60 հատ ճյուղ), կատարել սանիտարական էտ, Վայք քաղաքի Ամանորյա տոնածառի համար:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 263-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓՈՌ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 1.84771 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Փոռ բնակավայրում գտնվող1.84771 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, 10-043-0122- կադաստրային ծածկագրով հողամասը, հողատեսքը՝ արոտավայր, ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և ներկայացնել իրավունքի պետական գրանցման. չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022XTMXGE:
2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ Ու Մ N 264-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 19.10.2023Թ-Ի ԹԻՎ 201-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ն մասի 1-ին կետով՝

## Ո Ր Ո Շ Ու Մ  Ե Մ՝

1.Վայք համայնքի ղեկավարի 19.10.2023 թվականի թիվ 201-Ա որոշման հղման մեջ «հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշմամբ հաստատված կարգի 3.2 կետի պահանջները» բառերի փոխարեն գրել «հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումը» բառերը, այնուհետև ինչպես տեքստում:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 265-Ա

### ԱՆՉԱՓԱՀԱՍ ԴԱՎԻԹ ՍԱՐԻԲԵԿԻ ՀԱՅՐՈՒՄՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «ընտանեկան օրենսգրքի» 134-րդ և 135-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «քաղաքացիական օրենսգրքի» 34-րդ և 37-րդ հոդվածներով, Հայասաստանի Հարապետության Կառավարության 2016թ.-ի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշման դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով քաղաքացի Բենիկ Սահակի Հայրումյանի դիմումը, Վայք համայնքի ղեկավարին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 15/12/2023 թվականի թիվ 11 արձանագրությունը՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.Լեռնային Ղարաբաղից տեղահանված,Վայք համայքի Զառիթափ բնակավայրում բնակվող, անչափահաս Դավիթ Սարիբեկի Հայրումյանի (ծնված 20.02.2013թ.) նկատմամբ սահմանել խնամակալություն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծնողները հրաժարվել են նրան խնամելուց:

2.Որպես խնամակալ նշանակել տատին՝ Մարինե Բորիսի Հայրումյանին (ՀՀ անձնագիր՝ AL0456378, տրված 06.10.2023թ. 020-ի կողմից, ծնված 29.07.1964թ.):

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մարինե Բորիսի Հայրումյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ № 266-Ա

## ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼ ՈՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Ընտանեկան օրենսգրքի» 134-րդ և 135-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 34-րդ, 35-րդ և 37-րդ հոդվածներով, Հայասատանի Հարապետության Կառավարության 2016թ.-ի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշման դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով Սվետլանա Գրիգորիի Առուստամյանի և Կիմա Վագիֆի Առուստամյանի դիմումները, Վայք համայնքի ղեկավարին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 15/12/2023 թվականի թիվ 11 արձանագրությունը՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.Լեռնային Ղարաբաղից տեղահանված,Վայք համայքի Զառիթափ բնակավայրում բնակվող, անչափահասներ՝ Արմիդա Կիմայի Առուստամյանի (ծնված՝ 18.02.2010թ.), Անդրանիկ Կիմայի Առուստամյանի (ծնված՝ 06.11.2012թ.) և Արսեն Կիմայի Առուստամյանի (ծնված՝ 06.03.2014թ.) նկատմամբ սահմանել խնամակալություն, իսկ անչափահաս Վիկտորիա Կիմայի Առուստամյանի (ծնված՝ 04.02.2008թ.) նկատմամբ սահմանելհոգաբարձություն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նրանց մայրը՝ Հեղինե Սերգեյի Մելքումյանը 29.01.2019թ-ին դատարանի վճռով զրկվել է ծնողական իրավունքներից, իսկ հայրը՝ Կիմա Վագիֆի Առուստամյանը հրաժարվել է երեխաներին խնամելուց:

2.Որպես խնամակալ նշանակել երեխաների հայրական կողմից տատին՝ Սվետլանա Գրիգորիի Առուստամյանին ( անձնագիր՝ AS0318424, տրված 07.09.2018թ. 070-ի կողմից, ծնված 28.12.1958թ.):

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սվետլանա Գրիգորիի Առուստամյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vaykt own@mail.ru

*19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 267-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 12.12.2023Թ-Ի ԹԻՎ 251-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ն մասի 1-ին կետով՝

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի ղեկավարի 12.12.2023 թվականի թիվ 251-Ա որոշման հղման մեջ ««Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով» բառերից հետո ավելացնել «ՀՀ Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 33-րդ կետով, 18/05/2006թ. թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով» բառերը, այնուհետև ինչպես տեքստում:

2. Նույն որոշման բովանդակության առաջին կետում «10-003-0004-0000 կադաստրային ծածկագրով հողամասը, որի վրա առկա է» բառերից հետո ավելացնել «Նարեկ Խաչատուրի Խաչատրյանի կողմից կառուցված» բառերը, այնուհետև ինչպես տեքստում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 268-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 4-րդ բաժնով և ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության հողամասերի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) և շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները, սահմանների կոորդինատներն ու տարածագնահատման գոտիականության քարտեզները սահմանելու, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն, 1994 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 462 -Նորոշումներն ուժը կորցրած ճանաչելու եվ 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1101-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1023-Ն որոշմամբ սահմանված գործակիցները՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. Համայնքի ղեկավարի կողմից օրինական ճանաչված Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Վայք քաղաքի Սիամանթոյի փողոց, 17/1 բնակելի տուն հասցեում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող շինությունը 273.9 քմ ընդհանուր մակերեսով՝ զբաղեցրած ու սպասարկման համար առանձնացված 0,02664 հա մակերեսով հողատարածքով, գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով վաճառել քաղ. Կարեն Սերոբի Հարությունյանին ՝ շինության համար՝ 1 168 460 /273.9 x 4266/ (մեկ միլիոն մեկ հարյուր վաթսունութ հազար չորս հարյուր վաթսուն) ՀՀ դրամ և հողատարածքի համար՝ 500 595 /266.4x1877.7/ (հինգ հարյուր հազար հինգ հարյուր իննսունհինգ) ՀՀ դրամ արժեքով:
2. Քաղաքացու հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ № 269-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏԵԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ «ԲԱՌՈԺ» ԿՈՉՎՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳԻՀԻ ՏԵՍԱԿԻ ԾԱՌԵՐԻՑ ՃՅՈՒՂԵՐ ՀԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. Թույլատրել Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի «Բառոժ» կոչվող տարածքում գտնվող «Գիհի» տեսակի ծառերից յուրաքանչյուրից կտրել 1-2 ճյուղ՝ (ընդհանուր 40-50 հատ ճյուղ՝ կատարելով սանիտարական էտ), Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի Ամանորյա տոնածառի համար:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

# Ո Ր Ո Շ Ու Մ N 270-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՃՈՒՐԴ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Վայք համայնքի ղեկավարի 29 նոյեմբերի 2022 թվականի թիվ 229-Ա որոշմամբ.

# Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող՝ համայնքի տարածքում հողերի օտարման աճուրդային հանձնաժողովի կողմից ներկայացված Վայք քաղաքի Ս.Շահումյան փ. 8/10 հասցեում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, 10-003-0011-0139 կադաստրային ծածկագրով , հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի 45/2 հասցեում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, 10-003-0010-0012 կադաստրային ծածկագրով , բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, Սարավան բնակավայրի 7-րդ փողոց, 2-րդ փակուղի, 17 հասցեում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, 10-039-0009-0001 կադաստրային ծածկագրով , բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասերը, օտարելու նպատակով հայտարարել աճուրդ և աճուրդի օր նշանակել 2024 թվականի հունվարի 22-ը:

2. Հաստատել աճուրդի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 271-Ա

## ԷԴԳԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՓԱՄԲՈՒԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԵՐԵՔ ՄԻԱՎՈՐ ԳՈՒՅՔԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Էդգար Հարությունի Փամբուկյանին սեփականության իրավունքով պատկանող, առանձին միավոր հանդիսացող, Վայք համայնքի գյուղ Սարավան, Սարալանջ թաղամաս 8 հասցեում գտնվող, 0.07209 հա /ծածկագիր՝ 10-039-0103-0014/, Վայք համայնքի գյուղ Սարավան, Սարալանջ մայրուղի 12 հասցեում գտնվող, 0.07152 հա և 0.12848 հա /ծածկագրեր՝ 10-039-0103-0011 և 10-039-0310-0015/ և Վայք համայնքի գյուղ Սարավան, Սարալանջ թաղամաս 10 հասցեում գտնվող 0.02065 հա /ծածկագիր՝ 10-039-0103-0012/ հողամասերը միավորել և ճանաչել մեկ միավոր:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված մեկ միավոր հանդիսացող հողատարածքը հասցեավորել՝ որպես Վայք համայնք, գյուղ Սարավան, Սարալանջ թաղամաս, 12 հողամաս:
3. Դիմել ՀՀ Կադաստրային կոմիտե սույն որոշման առաջին կետում նշված գույքի նկատմամբ պետական գրանցում կատարելու և Կադաստրային քարտեզում ուղղում կատարելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 272-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,00249 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 33-րդ կետով, 18/05/2006թ. թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Վայք քաղաքում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 0,00249 հա բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 10-003-0004-0000 կադաստրային ծածկագրով հողամասը, որի վրա առկա է Գեղամ Սլավիկի Հայրապետյանի կողմից կառուցված ինքնակամ կառուցված 21.6 քմ մակերեսով շինություն, համարել օրինական, ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և հասցեավորել՝ Վայք համայնք, Վայք քաղաք, Ա.Մելիքյան փողոց, 1-ին նրբանցք, 17/3 ավտոտնակ և ներկայացնել իրավունքի պետական գրանցման (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023XDJZSH):
2.Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
3.Ֆինանսական բաժնին՝ կատարել համապատասխան վճարումներ:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ